

## **Եվրոպական վիճակագրական համակարգի որակի հռչակագիր**

### **Եվրոպական վիճակագրական համակարգի առաքելությունը**

«Մենք տրամադրում ենք Եվրոպական Միությանը և աշխարհին բարձր որակի տեղեկատվություն տնտեսության և հասարակության վերաբերյալ Եվրոպական, ազգային և տարածաշրջանային մակարդակներով և դարձնում տեղեկատվությունը հասանելի յուրաքանչյուրի համար որոշումների կայացման նպատակների, հետազոտությունների և բանավեճերի համար»:

### **Եվրոպական վիճակագրական համակարգի տեսլականը**

«Եվրոպական վիճակագրական համակարգը կլինի աշխարհի առաջատարը վիճակագրական տեղեկատվության ծառայություններում և տեղեկատվության ամենակարևոր տրամադրողը Եվրոպական Միության և իր անդամ պետությունների համար: Հիմնվելով գիտական սկզբունքների և մեթոդների վրա, Եվրոպական վիճակագրական համակարգը կառաջարկի և շարունակաբար կբարելավի հարմոնիզացված Եվրոպական վիճակագրության ծրագիրը, որը էական հիմք է կազմում ժողովրդավարական գործընթացների և առաջընթացի համար հասարակությունում»:

**Այս առաքելությունը և տեսլականը իրագործելու համար Եվրոպական վիճակագրական համակարգի անդամները ձգտում են համատեղ համագործակցությանը համաձայն հետևյալ սկզբունքների՝**

- **Սպառողներն ուշադրության կենտրոնում**

Մենք տրամադրում ենք մեր սպառողներին արտադրանք և ծառայություններ, որոնք բավարարում են իրենց կարիքները: Արտաքին և ներքին սպառողների պարզ և ոչ պարզ կարիքները, պահանջները և ակնկալիքները կառաջնորդեն Եվրոպական վիճակագրական համակարգին, իր անդամներին, իրենց աշխատողներին և գործողություններին:

- **Շարունակական բարելավում**

Սպառողների կարիքները և պահանջները կփոխվեն, ինչպես այն միջավայրը, որում մենք գործում ենք: Գլոբալիզացիան և առաջընթացները մեթոդներում և տեխնոլոգիաներում կստեղծեն նոր հնարավորություններ: Դա հրամայական է, որ մենք ակտիվորեն ձգտենք բարելավելու մեր աշխատանքի մեթոդները՝ թե ինչպես օգտվել նոր հնարավորություններից և առավել լավ բավարարել մեր սպառողների պահանջները:

- **Արտադրանքի որակի հանձնառություն**

Մենք արտադրում ենք գիտական մեթոդներին համապատասխան բարձր որակի վիճակագրական տեղեկատվություն համաձայն օբյեկտիվության և գաղտնիության: Մենք տրամադրում ենք տեղեկատվություն յուրաքանչյուր արտադրանքի որակի հիմնական բնութագրերի վերաբերյալ, այնպես, որ սպառողները կարողանան գնահատել արտադրանքի որակը:

- **Տեղեկատվության մատչելիություն**

Մենք տրամադրում ենք վիճակագրական արդյունքներ սպառողին հարմար և մատչելի ձևով: Օգտագործելով նոր ՁԼՄ-ների հնարավորությունները, ապահովում ենք դյուրին հասանելիություն տեղեկատվությանը: Որքան հնարավոր է, մենք կբարձրացնենք սպառողի իրազեկությունն արտադրված վիճակագրության ուժեղ կողմերի և սահմանափակումների վերաբերյալ: Խորհրդատվությունը, թե ինչպես կարելի է օգտագործել տվյալները տարածման անբաժանելի մասն է:

- **Գործընկերությունը Եվրոպական վիճակագրական համակարգի սահմաններում և դրանցից դուրս**

Համագործակցությունը Եվրոպական վիճակագրական համակարգի ներկայիս և ապագա անդամների միջև, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ պետք է խրախուսել: Միայն աշխատելով միասին, մենք կարող ենք սովորել մյուսներից և աստիճանաբար զարգացնել մեր համակարգը: Անձնակազմի և մեր սպառողների, տվյալներ տրամադրողների, գործընկերների և այլ կողմերի հիմնավոր գիտելիքները պետք է միավորվեն մեզ համար գերազանցելու սպասելիքները մեր նպատակում:

- **Հարգանք տվյալներ տրամադրողների կարիքների նկատմամբ**

Վիճակագրության համար տվյալներ տրամադրողները՝ ռեսպոնդենտները, հատկապես կարևոր խումբ է, որի հետ պետք է հաստատվի փոխշահավետ գործընկերություն: Վիճակագրության արտադրողները պետք է ձգտեն մշտապես նվազագույնի հասցնելու ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը ինչպես օբյեկտիվ, այնպես էլ հասկանալի բեռը:

- **Առաջնորդության հանձնառություն**

Կազմակերպությունների առաջնորդները Եվրոպական վիճակագրական համակարգում իրականացնում են անձնական, ակտիվ և տեսանելի առաջնորդություն որակի մշակույթ ստեղծելու և պահպանելու համար: Ապահովելով հստակ ընդհանուր ուղղություն, կարևորելով կատարելագործման գործունեությունները և խթանելով հզորացումը ու ինովացիան, առաջնորդները հնարավորություն են տալիս աշխատակիցներին կատարել հաջող աշխատանք և շարունակաբար ձգտել բարելավմանը:

- **Համակարգված որակի կառավարում**

Մենք համակարգված և կանոնավորաբար բացահայտում ենք բոլոր համապատասխան ոլորտներում ուժեղ ու թույլ կողմերը շարունակաբար բացահայտելու և իրականացնելու բարելավումներ որտեղ անհրաժեշտ է: Երկարաժամկետ ռազմավարական կողմնորոշումը կենսական կարևորություն ունի Եվրոպական վիճակագրական համակարգի զարգացման համար: Երկարաժամկետ ազդեցությունները բոլոր իրավիճակներում պետք է դիտարկվեն առավել ակնհայտ կարճաժամկետ ազդեցությունների հետ մեկտեղ:

- **Արդյունավետ և գործունակ գործընթացներ**

Եվրոպական վիճակագրական համակարգի գործունեությունները պետք է դիտվեն որպես գործընթացներ, որոնք ստեղծում են արժեք սպառողների համար: Մենք աշխատում ենք գործունակ արտադրելու արտադրանք որքան հնարավոր է փոքր ռեսուրսներով և կանխելու սխալները գործընթացներում և արտադրանքներում: Գործընթացները և դրանց որակը շարունակաբար վերանայվում և բարելավվում են:

- **Անձնակազմի բավարարվածություն և անձնակազմի զարգացում**

Իրազեկ անձնակազմ գրավելու և պահպանելու համար կարևոր է բավարարել անձնակազմի պահանջները: Եվրոպական վիճակագրական համակարգի անդամները պետք է վերաբերվեն իրենց աշխատակիցներին որպես հիմնական ռեսուրսների, ինչպիսիք նրանք են: